Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-655-06.11.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Հայաստանի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-79-Ն օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասում՝

1) ուժը կորցրած ճանաչել 4-րդ կետը.

2) 15-րդ կետում «տարածքային կառավարման» բառերից հետո լրացնել «և արտակարգ իրավիճակների» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 20-րդ կետով.

«20) միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարարություն:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Հայաստանի Հանրապետության կառավարման կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բաբուխանյան 2014-11-11 թիվ 67/14 գրություն	Հայաստանի Հանրապետության կառավարման կառուցվածքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետի «լրացնել» բառից հետո ավելացնել «փախստականների հարցերի» բառերը:	Չի ընդունվել:	Գտնում ենք, որ առաջարկն ընդունելի չէ, քանի որ այն չի բխում արդյունավետ կառավարման համակարգի ապահովումից: